

Անտոն Վ. Հետամուտ եղած էր բժշկութեան արուեստին, ինչպէս շատ լատին միսիոնարներ կ'ըլլային, որով աւելի դիւրաւ եւ սիրով կը հիւրընկալուէին քրիստոնեայ հասարակութիւններէն, եւ նոյն իսկ մահամետականներէն: Տփղիս գտնուած միջոցին՝ 1810ին, բարեկամացած էր Էջմիածնի Եփրեմ Կաթողիկոսին՝ որ «ունէր ցաւ հիմորիդէս», Կաթողիկոսն հրաւիրեց Անտոն Վ.ը, որ Արարատու երկիրն անցնի եւ զինքը դարմանէ: Անտոն Վ. Հետեւեցաւ հրաւիրին, բայց հազիւ եօթ օր կրցաւ Էջմիածին Կաթողիկոսին մօտ մնալ. վասն զի Արարատու Պարսիկ իշխանն իմանալով որ անիկայ բժշկութիւն գիտէ, զինք առաւ Երեւան տարաւ, ուր ակամայ չորս տարի իբրեւ Առաջնորդ մնաց: Այս առթիւ Անտոն Վ. կը գրէ Կաթողիկոսի մասին, որուն հետ կրօնական բանակցութիւններ ունեցած էր. «Խոստովանեաց Եփրեմ զամենայն մասունս հաւատոյ զոր ինչ պահանջէ սուրբ Եկեղեցի մեր, սակայն վասն երկիւղի բնակչաց ոչ կարաց յայտնել գրով:»,

Ղարս եւ Ախալցխա գաւառի քահանայքն ու ժողովուրդն (օսմանեան) 1814ին Եփրեմ Կաթողիկոսէն խնդրեցին, որ Անտոն Վ.ն իրենց Առաջնորդ Եպիսկոպոս կարգէ: Հաւանեցաւ Եփրեմ Կաթողիկոս, Անտոն Վ. առաջարկութիւնը սիրով յանձն առաւ Երեւանէն ազատելու համար, եւ պայմանաւ «չնզովելոյ զժողովն Քաղկեդոնի եւ զսուրբ Լեւոն Պապ», 1815 Մայիս 9ին Եպիսկոպոս ձեռնադրուեցաւ